ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի 2022 թվականի սուբվենցիայի ծրագրային հայտերին հավանություն տալու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 16.11.2006 թվականի N 1708-Ն որոշման պահանջից, համաձայն որի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրային հայտերի փաթեթը պետք է ներառի ծրագրի իրականացման նպատակահարմարության վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը: Ներկայացված նախագծով առաջարկվում է համայնքի ավագանուն հավանություն տալ Նաիրի համայնքի 2022 թվականի սուբվենցիայի ծրագրային 10 հայտերին, որպեսզի դրանք ներկայացվեն ՀՀ կառավարություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի 2022 թվականաի սուբվենցիայի ծրագրային հայտերին հավանություն տալու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի սուբվենցիայի ծրագրային հայտերին հավանություն տալու մասին որոշման ընդունումը համայնքի 2022 թվականի բյուջեում ենթադրվում է ծախսերի ավելացում 2310600.0 հազար դրամով, որից 1179210.0 հազար դրամը պետական բյուջեի հաշվին, իսկ 1131390.0 հազար դրամը՝ համայնքի միջոցների հաշվին: